ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2016թ. №58-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի, 144-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերության և "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 14-րդ մասի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի սեպտեմբերի 11-ի "2016 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին" N58-Ա որոշման 1-ին կետի, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս, Գորայք, Մեղրի և Տեղ համայնքներում նոր կազմավորվող տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքների ղեկավարների և համայնքների ավագանիների ընտրությունները նշանակել 2016 թվականի սեպտեմբերի 18-ին՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքում համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու հերթական ընտրությունները նշանակել 2016 թվականի սեպտեմբերի 18-ին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մյուս համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները նշանակել 2016 թվականի հոկտեմբերի 2-ին՝ համաձայն հավելվածի:
4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված համայնքների գործող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները դադարում են համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված դրույթների, իսկ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքի և սույն որոշման 3-րդ կետով հաստատված հավելվածում նշված համայնքների գործող տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտման օրն է 2016 թվականի նոյեմբերի 12-ը, բացառությամբ՝ Աղիտու, Իշխանասար, Նորավան, Շաքի, Որոտան (Սիսիանի շրջ.), Գեղանուշ, Խդրանց, Ծավ, Ներքին Խոտանան, Շիկահող և Վանեք համայնքների գործող ղեկավարների, որոնց լիազորությունների ավարտման օրը 2016 թվականի հոկտեմբերի 22-ն է:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
6. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2016 թվականի հուլիսի 9-ից, իսկ 3-րդ կետը՝ 2016 թվականի հուլիսի 23-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ.ԴԱՎԹՅԱՆ**

2016թ. Հուլիսի 6
ք. Կապան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Սյունիքի
մարզպետի 2016 թվականի հուլիսի 6-ի
N58_Ա որոշման

Ցանկ
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 2-ին տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ նշանակված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքների

1□ Քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքներ

Հերթական համարը	Ընտրատարածքը	Համայնքի անվանումը	Հերթական ընտրության միջոցով ձևավորվող տեղական ինքնակառավարման մարմինը
1	37	Դաստակերտ	Համայնքի ղեկավար և ավագանի
2	37	Սիսիան	Համայնքի ղեկավար և ավագանի
3	38	Կապան	Համայնքի ղեկավար և ավագանի

2□ Բացառապես գյուղական բնակավայրերից բաղկացած համայնքներ

Հերթական համարը	Ընտրատարածքը	Համայնքի անվանումը	Հերթական ընտրության միջոցով ձևավորվող տեղական ինքնակառավարման մարմինը
1	37	Ախլաթյան	Համայնքի ավագանի
2	37	Աղիտու	Համայնքի ղեկավար և ավագանի
3	37	Անգեղակոթ	Համայնքի ղեկավար և ավագանի
4	37	Աշոտավան	Համայնքի ավագանի
5	37	Բալաք	Համայնքի ղեկավար և ավագանի
6	37	Բնունիս	Համայնքի ղեկավար և ավագանի
7	37	Բռնակոթ	Համայնքի ղեկավար և ավագանի
8	37	Գետաթաղ	Համայնքի ղեկավար և ավագանի
9	37	Դարբաս	Համայնքի ավագանի
10	37	Թանահատ	Համայնքի ավագանի
11	37	Թասիկ	Համայնքի ղեկավար և ավագանի
12	37	Իշխանասար	Համայնքի ղեկավար
13	37	Լծեն	Համայնքի ղեկավար և ավագանի
14	37	Լոր	Համայնքի ավագանի
15	37	Հացավան	Համայնքի ղեկավար և ավագանի
16	37	Մուցք	Համայնքի ղեկավար և ավագանի
17	37	Նորավան	Համայնքի ղեկավար
18	37	Շաղատ	Համայնքի ղեկավար և ավագանի
19	37	Շաքի	Համայնքի ղեկավար և ավագանի
20	37	Շենաթաղ	Համայնքի ղեկավար և ավագանի
21	37	Որոտան (Սիսիանի շրջ.)	Համայնքի ղեկավար
22	37	Սալվարդ	Համայնքի ղեկավար և ավագանի
23	37	Վաղատին	Համայնքի ղեկավար և ավագանի
24	37	Տոլորս	Համայնքի ղեկավար և ավագանի
25	37	Ույծ	Համայնքի ղեկավար և ավագանի

26	38	Ագարակ	Համայնքի ղեկավար և ավագանի
27	38	Աղվանի	Համայնքի ավագանի
28	38	Աճանան	Համայնքի ավագանի
29	38	Անտառաշատ	Համայնքի ղեկավար
30	38	Արծվանիկ	Համայնքի ավագանի
31	38	Առաջաձոր	Համայնքի ղեկավար և ավագանի
32	38	Գեղանուշ	Համայնքի ղեկավար և ավագանի
33	38	Գեղի	Համայնքի ղեկավար և ավագանի
34	38	Դավիթ Բեկ	Համայնքի ղեկավար և ավագանի
35	38	Եղվարդ	Համայնքի ղեկավար և ավագանի
36	38	Լեռնաձոր	Համայնքի ղեկավար և ավագանի
37	38	Խդրանց	Համայնքի ղեկավար և ավագանի
38	38	Ծավ	Համայնքի ղեկավար և ավագանի
39	38	Կաղնուտ	Համայնքի ավագանի
40	38	Ձորաստան	Համայնքի ավագանի
41	38	Ներքին Խոտանան	Համայնքի ղեկավար և ավագանի
42	38	Ներքին Հանդ	Համայնքի ղեկավար և ավագանի
43	38	Նոր Աստղաբերդ	Համայնքի ղեկավար
44	38	Նորաշենիկ	Համայնքի ղեկավար և ավագանի
45	38	Շիկահող	Համայնքի ղեկավար և ավագանի
46	38	Շրվենանց	Համայնքի ղեկավար և ավագանի
47	38	Սեւաքար	Համայնքի ղեկավար և ավագանի
48	38	Սյունիք	Համայնքի ղեկավար և ավագանի
49	38	Սրաշեն	Համայնքի ղեկավար և ավագանի
50	38	Վարդավանք	Համայնքի ավագանի
51	38	Վանեք	Համայնքի ղեկավար և ավագանի
52	38	Վերին Խոտանան	Համայնքի ղեկավար և ավագանի
53	38	Տանձավեր	Համայնքի ղեկավար և ավագանի
54	38	Տավրուս	Համայնքի ղեկավար և ավագանի
55	38	Ուժանիս	Համայնքի ավագանի
56	38	Քաջարան	Համայնքի ղեկավար և ավագանի
57	38	Օխտար	Համայնքի ավագանի

Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ **Ռ.Սարգսյան**